ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ
EUROPEAN UNION FOR ARMENIA

Austrian Development Cooperation

ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
THE MINISTRY OF ECONOMY OF THE RA

Austrian Development Agency

ԵՄ Կանաչ գյուղատնտեսության նախաձեռնությունը հայտարարում է

ԿԱՆԱՉ ԵՒ ՕՐԳԱՆԱԿԱՆ ԱԳՐՈԲԻԶՆԵՍԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ

ՄՐՑՈՒՅԹ

ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏԸ

22 ՄԱՐՏԻ 2023Թ., ԺԱՄԸ 16:00

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ
EUROPEAN UNION FOR ARMENIA

Austrian Development Cooperation

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Austrian Development Agency

ԵՄ Կանաչ գյուղատնտեսության նախաձեռնություն Հայաստանում (ԵՄ-ԿԳՆՀ)

Ագրոբիզնեսների աջակցության ծրագիր 3

ՀԱՅՏԱՄՐՑՈՒՅԹ

ԿԳՆՀ Ծրագիր - ENI/2019/408-058

ԱԶԳ Հղում - 6546-00/2019

Այս մրցույթի համար հայտադիմումի ձևի և օժանդակ փաստաթղթերի ընդունման վերջնաժամկետն է՝

2023 թվականի մարտի 29, Երևանի ժամանակով՝ 16:00

Ավստրիայի Հանրապետության դեսպանության տեխնիկական համագործակցության գրասենյակ, Երևան
ԵՄ Կանաչ գյուղատնտեսության նախաձեռնություն Հայաստանում
26/1 Վ. Սարգսյան փողոց • 0001 Երևան • Հայաստան
•www.gaiaarmenia.am • gaia@ada.gv.at • facebook.com/GAIAArmenia

1. *Ներածություն*

Եվրոպական միությունը (ԵՄ) պատվիրակել է Ավստրիական զարգացման գործակալությանը (ԱԶԳ) իրականացնել Հայաստանում Կանաչ գյուղատնտեսության զարգացմանը միտված ռազմավարական ծրագիր: ԵՄ Կանաչ գյուղատնտեսության նախաձեռնություն Հայաստանում (ԵՄ-ԿԳՆՀ) ծրագրի արժեքը կազմում է **11.7 միլիոն եվրո**: Ծրագիրը մեկնարկել է 2019 թվականի հոկտեմբերի 1-ին, որի առաջին 5 ամիսները սկզբնական փուլն էին: 2022 թվականին ծրագրի իրականացման ժամկետը երկարաձգվեց 10 ամսով՝ 2024 թվականի հունվարի 31-ին պլանավորված ավարտով:

«ԵՄ-ԿԳՆՀ» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից, համաֆինանսավորվում և իրականացվում է Ավստրիական զարգացման համագործակցության (ԱԶՀ) գործառնական միավոր Ավստրիական զարգացման գործակալության կողմից, և համատեղ իրականացվում է ՄԱԿ-ի զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) կողմից: «ԵՄ-ԿԳՆՀ» ծրագիրը Տարածաշրջանային զարգացման 2018 թվականի տարեկան գործողությունների ԵՄ ծրագրի մասն է: Գործողությունների ընդհանուր և հատուկ նպատակները համահունչ են ՏԳԾ 2018-ին, որը հաստատված է ԵՄ անդամ 28 պետությունների կողմից: «ԵՄ-ԿԳՆՀ» ծրագրի ***ընդհանուր նպատակն*** է նպաստել Հայաստանի հյուսիսային շրջաններում ընդհանուր և հավասարակշռված ներառական աճին՝ կանաչ գյուղատնտեսության խթանման և տեղական մակարդակում հավելյալ արժեքի մեծացման միջոցով:

Ագրոբիզնեսի աջակցության ծրագրի (ԱԱԾ) շրջանակներում փոքրածավալ ագրոբիզնեսներին կտրամադրվի աջակցություն՝ գյուղատնտեսական արտադրության մեքենաների և սարքավորումների, բերքահավաքից հետո կիրառվող և վերամշակող սարքավորումների, ինչպես նաև որոշ ենթակառուցվածքային ներդրումների ձևով: Հաջողակ դիմորդները նաև կներգրավվեն «ԵՄ-ԿԳՆՀ» ծրագրի կարողությունների զարգացման և շուկայավարման նախաձեռնություններում՝ իրենց կանաչ/օրգանական բիզնես ծրագրերի հաջող մեկնարկը և առաջընթացն ապահովելու նպատակով:

2. *Թիրախային խմբեր և առաջնային արժեշղթաներ*

«ԵՄ-ԿԳՆՀ» Ագրոբիզնեսի աջակցության ծրագրի շրջանակներում հայտարարված մրցույթը մշակված է **2 ԼՈՏ-ով**:

Երկրում ***կանաչ գյուղատնտեսության նախաձեռնություններին (ԼՈՏ 1)*** աջակցելու համար «ԵՄ-ԿԳՆՀ»-ն թիրախավորում է կոնկրետ արժեշղթաներ նախապես

Ավստրիայի Հանրապետության դեսպանության տեխնիկական համագործակցության գրասենյակ, Երևան
ԵՄ Կանաչ գյուղատնտեսության նախաձեռնություն Հայաստանում
26/1 Վ. Սարգսյան փողոց • 0001 Երևան • Հայաստան
•www.gaiaarmenia.am • gaia@ada.gv.at • facebook.com/GAIAArmenia

ընտրված աշխարհագրական տարածքներում: «ԵՄ-ԿԳՆՀ»-ի կողմից թիրախավորված մարզերն են՝

1.Շիրակ,
2.Լոռի,
3.Տավուշ:

Ընտրված թիրախավորվող արժեշղթաներն են՝

1. ***Մրգեր և հատապտուղներ***՝ ներառյալ տնկարանային գործառնություններ, առաջնային արտադրություն և վերամշակում (հյութեր, պահածոյացված, չոր կամ սառեցված մրգեր, ինչպես նաև այլ ենթամթերքներ, ինչպիսիք են յուղերը, մզվածքները, եթերայուղերը և այլն):
2. **Բանջարեղեն**՝ ներառյալ սածիլների արտադրություն, առաջնային արտադրություն և վերամշակում:

Հայաստանում ***օրգանական գյուղատնտեսության նախաձեռնություններին (ԼՈՏ 2)*** աջակցելու համար «ԵՄ-ԿԳՆՀ» ծրագիրը թիրախավորում է երկրի բոլոր մարզերը: Օրգանական ագրոբիզնեսի (ներառյալ՝ հողագործություն, վայրի մշակաբույսերի հավաքում և ագրովերամշակում) բոլոր նախաձեռնությունները կարող են դիմել աջակցության ստացման՝ «ԵՄ-ԿԳՆՀ» ծրագրի շրջանակներում: Նախապատվությունը կտրվի օրգանական արժեշղթաներին, որոնց աջակցություն է տրամադրվել նախկինում ԵՄ ֆինանսավորմամբ Օրգանական գյուղատնտեսության աջակցության նախաձեռնություն (ՕԳԱՆ) ծրագրի շրջանակներում, ինչպես նշված է ստորև՝

1) ***Թարմ և վերամշակված մրգեր***՝ ներառյալ հյութեր, պահածոյացված, չոր կամ սառեցված մրգեր և այլ ենթամթերքներ (յուղեր, մզվածքներ, եթերայուղեր և այլն)
2) ***Թարմ և վերամշակված հատապտուղներ***՝ ներառյալ հյութեր, պահածոյացված, չոր կամ սառեցված հատապտուղներ և այլ ենթամթերքներ (յուղեր, մզվածքներ, եթերայուղեր և այլն)
3) ***Թարմ և վերամշակված խոտաբույսեր***՝ ներառյալ չորացված խոտաբույսեր, թեյեր, դեղաբույսեր և այլ ենթամթերքներ (յուղեր, մզվածքներ, եթերայուղեր և այլն)
4) ***Մեղր և մեղվաբուծական արտադրանքներ***
5) ***Փորձարարական*** **մշակաբույսեր** (օրինակ՝ ցորեն, հաճար, հատիկաընդեղեն մշակաբույսեր (սիսեռ, լոբի և ոսպ) և այլն) և այլ ենթամթերքներ:

Ավստրիայի Հանրապետության դեսպանության տեխնիկական համագործակցության գրասենյակ, Երևան
ԵՄ Կանաչ գյուղատնտեսության նախաձեռնություն Հայաստանում
26/1 Վ. Սարգսյան փողոց • 0001 Երևան • Հայաստան
•www.gaiaarmenia.am • gaia@ada.gv.at • facebook.com/GAIAArmenia

3.Ագրոբիզնեսի աջակցության ծրագրի նպատակները

Ագրոբիզնեսի աջակցության ծրագրի մրցույթի հրավերի նպատակն է խրախուսել և աջակցել **ագրոբիզնեսներին** անցում կատարել ավանդականից կանաչ/օրգանական գյուղատնտեսության և/կամ հզորացնել իրենց արդեն իսկ գոյություն ունեցող կանաչ/օրգանական գյուղատնտեսության և վերամշակման կարողությունները՝ արտադրողականության բարելավման և եկամուտների ավելացման նպատակով:

Ինչպես նշվեց սույն փաստաթղթի նախորդ բաժնում, Ագրոբիզնեսի աջակցության ծրագիրը կմշակվի և կհայտարարվի **2 ԼՈՏ-ով:**

ԼՈՏ 1-ը կթիրախավորի ընտրված արժեշղթաները վերոնշյալ երեք մարզերում (Շիրակ, Լոռի, Տավուշ) և նպատակ կունենա աջակցել ագրոբիզնեսներին հետևյալում՝

1. Կարողությունների հզորացում՝ կանաչ տեխնոլոգիաների և գյուղատնտեսական արդյունավետ գործելակերպերի որդեգրումն ու կիրառումը հնարավոր դարձնելու ուղղությամբ:
2. Ֆերմայի արտադրանքի ծավալի և եկամուտների ավելացում:
3. Թիրախ մարզերում սեզոնային և մշտական աշխատանքի հնարավորությունների ստեղծում:
4. Վնասատուների, հողի, ջրի կառավարման համալիր միջոցառումների կիրառում՝ շրջակա միջավայրի, բույսերի/մշակաբույսերի և հողի վրա ճնշումը նվազեցնելու նպատակով:
5. Ոռոգման այնպիսի եղանակների կիրառում, որոնք կապահովեն ջրային ռեսուրսների խնայողություն:
6. Գյուղատնտեսական արդյունավետ գործելակերպի ներդնում՝ ապահովելով բնական ռեսուրսների կայուն կառավարում, կենսաբազմազանության պաշտպանություն, թափոնների կառավարում և կլիմայի պահպանության գործողություններ, ինչպես նաև գյուղատնտեսական թափոնների կրճատում՝ ուղղված ջրային ռեսուրսների, հողի և օդի աղտոտման կանխարգելմանը:
7. Ռեսուրս-/էներգարդյունավետ գյուղատնտեսական գործառնությունների ներդնում:
8. Գյուղատնտեսական արդյունավետ գործելակերպի ներդնում, ինչը կնպաստի էկոհամակարգերի և կենսաբազմազանության պաշտպանությանը, կստեղծի նպաստավոր պայմաններ փոշոտող և օգտակար միջատների համար:
9. Կորուստների նվազեցում արտադրության շրջանառության բոլոր փուլերի ընթացքում:

Ավստրիայի Հանրապետության դեսպանության տեխնիկական համագործակցության գրասենյակ, Երևան
ԵՄ Կանաչ գյուղատնտեսության նախաձեռնություն Հայաստանում
26/1 Վ. Սարգսյան փողոց • 0001 Երևան • Հայաստան
•www.gaiaarmenia.am • gaia@ada.gv.at • facebook.com/GAIAArmenia

10. Կանաչ տեխնոլոգիաների և գյուղատնտեսական արդյունավետ գործելակերպերի ներկայացում և վերարտադրում:

ԼՈՏ 2-ը կթիրախավորի օրգանական գյուղատնտեսության ընտրված արժեշղթաները երկրի բոլոր մարզերում և նպատակաուղղված կլինի աջակցել ագրոբիզնեսներին հետևյալում՝

1. Կարողությունների հզորացում օրգանական գյուղատնտեսության գործելակերպի կիրառման նպատակով:
2. Նախաձեռնում և/կամ անցում օրգանական ագրոբիզնեսի:
3. Ֆերմայի արտադրության, ծավալների և հետևաբար, եկամուտների ավելացում:
4. Օրգանական հավաստագրված հողատարածքների ընդլայնում :
5. Օրգանական արժեշղթաներում սեզոնային և մշտական աշխատանքային հնարավորությունների ստեղծում:
6. Օրգանական հավաստագրված արտադրանքի և արտադրության դիվերսիֆիկացում:
7. Կայուն օրգանական գյուղատնտեսության գործելակերպի ներկայացում և վերարտադրում:
8. Օրգանական մրգերի, բանջարեղենի արտադրության խթանում և/կամ վայրի խոտաբույսերի և հատապտուղների հավաքման ծավալների մեծացում (էկոլոգիապես անվտանգ գործելակերպին համապատասխան)՝ որպես հումք օրգանական հավաստագրված վերամշակման համար:
9. Օրգանական հումքի (սերմեր, տնկիներ, պարարտանյութեր, մեղվաբուծական արտադրանք և այլն) արտադրության խթանում՝ օրգանական արտադրողներին և վերամշակողներին աջակցելու նպատակով:
10. Օրգանական հավաստագրված հայկական արտադրանքի վաճառքի մեծացում տեղական, հանրային, ինչպես նաև միջազգային շուկաներում:

Հետագա գնահատման համար դիտարկվելու են այն ագրոբիզնեսների կողմից ներկայացված ծրագրերը, որոնք չունեն բացասական ազդեցություն շրջակա միջավայրի և էկոհամակարգերի վրա, և որոնցում ներգրավված են կանայք/աղջիկներ և խոցելի խմբերի ներկայացուցիչներ:

4. Իրավասության չափանիշներ

Ագրոբիզնեսների՝ ԼՈՏ 1-ին դիմելու իրավասության չափանիշներն ընգրկում են հետևյալ դրույթները՝

Ավստրիայի Հանրապետության դեսպանության տեխնիկական համագործակցության գրասենյակ, Երևան
ԵՄ Կանաչ գյուղատնտեսության նախաձեռնություն Հայաստանում
26/1 Վ. Սարգսյան փողոց • 0001 Երևան • Հայաստան
•www.gaiaarmenia.am • gaia@ada.gv.at • facebook.com/GAIAArmenia

1. Լինել հիմնադրված/գրանցված/բնակվել թիրախավորված Շիրակ, Լոռի կամ Տավուշ մարզերի համայնքներից որևէ մեկում:
2. Գյուղատնտեսության ոլորտում ունենալ 2-ից ավելի տարվա փորձ, այսինքն՝ ներգրավված լինել **մրգերի կամ բանջարեղենի** արժեշղթաների գյուղատնտեսական արտադրության և/կամվերամշակման ոլորտներում, ինչպես նշված է սույն փաստաթղթի 2-րդ բաժնում:
3. Ունենալ (սեփական կամ վարձով և այլն) գյուղատնտեսական արտադրության և/կամ վերամշակման տարածք, որը կարող է պոտենցիալ համապատասխանել կանաչ տեխնոլոգիաների և գյուղատնտեսական արդյունավետ գործելակերպերի կիրառման հիմնական պահանջներին:
4. Ունենալ կանաչ տեխնոլոգիաների և գյուղատնտեսական արդյունավետ գործելակերպերի վրա հիմնված արտադրություն ԿԱՄ պատրաստակամ լինելու սկսել դրանց կիրառումը գյուղատնտեսական արտադրության/վերամշակման մեջ:
5. Կարող են ներկայացնել պարզ, իրատեսական և կայուն կանխատեսում տնտեսական, շրջակա միջավայրի ու սոցիալական կայունության տեսանկյունից ներդրումների ազդեցության մասին:
6. Բաց են և պատրաստակամ վերարտադրելու «ԵՄ-ԿԳՆՀ» ծրագրի շրջանակներում ներկայացված կանաչ տեխնոլոգիաները և գյուղատնտեսական արդյունավետ գործելակերպերը, ինչպես նաև կիսվելու փորձով և գիտելիքներով այլ ֆերմերների հետ:
7. Չեն հանդիսանում «ԵՄ-ԿԳՆՀ» Ագրոբիզնեսի աջակացության ԵՄ կողմից հովանավորվող որևէ այլ ծրագրի շահառու:

Ագրոբիզնեսների՝ ԼՈՏ 2-ին դիմելու իրավասության չափանիշներն ընգրկում են հետևյալ դրույթները՝

1. Լինել հիմնադրված/գրանցված/բնակվել Հայաստանի գյուղական բնակավայրերում:
2. Գյուղատնտեսության ոլորտում ունենալ 2-ից ավելի տարվա փորձ, այսինքն՝ ներգրավված լինել գյուղատնտեսական արժեշղթաներում արտադրության, վերամշակման ոլորտներում:
3. Ունենալ (սեփական, վարձով և այլն) գյուղատնտեսական արտադրության և/կամ վերամշակման տարածք, որը կարող է պոտենցիալ համապատասխանել օրգանական հավաստագրման պահանջներին:
4. Արտադրում են ըստ օրգանական գյուղատնտեսության չափորոշիչների ԿԱՄ պատրաստակամ են սկսել դրանց կիրառումը:

Ավստրիայի Հանրապետության դեսպանության տեխնիկական համագործակցության գրասենյակ, Երևան
ԵՄ Կանաչ գյուղատնտեսության նախաձեռնություն Հայաստանում
26/1 Վ. Սարգսյան փողոց • 0001 Երևան • Հայաստան
•www.gaiaarmenia.am • gaia@ada.gv.at • facebook.com/GAIAArmenia

5. Օրգանական հավաստագրված են կամ պատրաստակամ են դիմելու օրգանական հավաստագրման «ԵՄ-ԿԳՆՀ» ծրագրի ընթացքում:
6. Պատրաստակամ են և հնարավորություն ունեն վճարել 3 և ավել տարվա օրգանական հավաստագրման վճարը:
7. Կարող են ներկայացնել պարզ, իրատեսական և կայուն կանխատեսում տնտեսական, շրջակա միջավայրի ու սոցիալական կայունության տեսանկյունից ներդրումների ազդեցության մասին:
8. Բաց են և պատրաստակամ վերարտադրելու «ԵՄ-ԿԳՆՀ» ծրագրի ներկայացրած օրգանական գյուղատնտեսության գործելակերպը, ինչպես նաև կիսվելու փորձով և գիտելիքներով այլ ֆերմերների հետ:
9. Չեն հանդիսանում «ԵՄ-ԿԳՆՀ» Ագրոբիզնեսի աջակցության ԵՄ կողմից հովանավորվող որևէ այլ ծրագրի շահառու:

Սույն հայտամրցույթին հատկապես խրախուսվում է դիմել ագրոբիզնես ունեցող կանանց և երիտասարդներին, տնտեսապես և սոցիալապես խոցելի խմբերի ֆերմերներին:

5. Նախատեսվող աջակցությունը

ԼՈՏ 1-ով ընտրված յուրաքանչյուր ագրոբիզնեսին տրամադրվող աջակցությունը **չի կարող գերազանցել 10,000 եվրոն:**

ԼՈՏ 2-ով ընտրված յուրաքանչյուր ագրոբիզնեսին տրամադրվող աջակցությունը **չի կարող գերազանցել 20,000 եվրոն՝ այգեգործական արժեշղթաների և 10,000 եվրո՝ մեղվաբուծական արժեշղթաների համար:**

Անբավարար որակի կամ քանակի հայտադիմումներ ստանալու դեպքում Պայմանավորվող մարմինն իրավունք է վերապահում վերաբաշխել սույն Ծրագրի համար նախատեսված ֆոնդերը:

Կարևոր նշում. *<u>շահառուներին չեն տրամադրվելու կանխիկ կամ կանխիկին համարժեք դրամաշնորհներ:</u>*

Հայտադիմումի մեջ ֆերմերների կողմից հայցվող գյուղատնտեսական միջոցները ձեռք կբերվեն ԱԶԳ-ի կողմից և կմնան ԱԶԳ-ի սեփականությունը մինչև ԱԶԳ-ի և շահառուներից յուրաքանչյուրի միջև կնքված պայմանագրերի ավարտը:

Ագրոբիզնեսների կարողությունների հզորացման համար նախատեսվում է տրամադրել գյուղատնտեսական արտադրության մեքենաներ և սարքավորումներ, հետբերքահավաքային և վերամշակող սարքավորումներ, ինչպես նաև որոշ

Ավստրիայի Հանրապետության դեսպանության տեխնիկական համագործակցության գրասենյակ, Երևան
ԵՄ Կանաչ գյուղատնտեսության նախաձեռնություն Հայաստանում
26/1 Վ. Սարգսյան փողոց • 0001 Երևան • Հայաստան
•www.gaiaarmenia.am • gaia@ada.gv.at • facebook.com/GAIAArmenia

ենթակառուցվածքային ներդրումներ: Ստորև ներկայացված է այն սարքերի ամբողջական ցանկը, որոնք կարող են տրամադրվել այս հայտամրցույթի շրջանակներում:

1. Ավտոմատացված կաթիլային ոռոգման համակարգեր
2. Գյուղատնտեսական մեքենաներ և սարքավորումներ (օրինակ՝ մինի տրակտոր, կուլտիվատոր, սերմնացան մեքենա, ջրցող մեքենա)
3. Սառնարանային սարքավորումներ
4. Թունելային ջերմոցներ
5. Հակակարկտային ցանցեր
6. Տեսակավորման, փաթեթավորման, պիտակավորման սարքավորումներ և այլն
7. Մրգի էլեկտրական չորանոց
8. Արևային էներգիայի համակարգեր գյուղատնտեսական օգտագործման համար
9. Փեթակներ
10. Ավտոմատ մեղր հավաքող սարք

Ագրոբիզնեսի աջակցության ծրագրի շրջանակներում շահառուներին չեն տրամադրվելու.

1. Վերը նշված ցանկում առկա սարքերից բացի այլ գյուղատնտեսական և վերամշակող սարքավորումներ
2. Օրգանական կամ այլ հավաստագրման վճարներ
3. Գյուղատնտեսական փոքր գործիքներ (բահ, փոցխ, ֆերմերի հանդերձանք և այլն) և նյութական միջոցներ (սերմեր/սածիլներ, պարարտանյութեր, թունաքիմիկատներ և այլն)
4. Աշխատավարձեր և ծառայություններ՝ կապված շահառուի հողագործության և ագրոբիզնեսի հետ:
5. Օգտագործված նյութեր և սարքավորումներ
6. Շինանյութ

6. Հայտադիմումների ընդունման գործընթացը

Բոլոր հետաքրքրված և իրավասու ագրոբիզնեսներից կպահանջվի լրացնել Ագրոբիզնեսի աջակցության ծրագրի հայտադիմումի ձևերը, որոնք հասանելի կլինեն ՀՀ Էկոնոմիկայի նախարարության կայքի (www.mineconomy.am) «Հայտարարություններ» բաժնում, ԵՄ-ԿԳՆՀ կայքի (www.gaiaarmenia.am) «Լուրեր» բաժնում:

Ավստրիայի Հանրապետության դեսպանության տեխնիկական համագործակցության գրասենյակ, Երևան
ԵՄ Կանաչ գյուղատնտեսության նախաձեռնություն Հայաստանում
26/1 Վ. Սարգսյան փողոց • 0001 Երևան • Հայաստան
•www.gaiaarmenia.am • gaia@ada.gv.at • facebook.com/GAIAArmenia

Դիմորդներից կպահանջվի ներկայացնել համապատասխան փաստաթղթեր, որոնք կներառեն՝

- Լրացված հայտադիմումի ձևը
- Տեղեկանք համայնքի ղեկավարից
- Համապատասխան այլ փաստաթղթեր, որոնք կարող են ներառել դաշտային քարտեզներ, սեփականության վկայականի պատճեններ, առկայության դեպքում օրգանական հավաստագրի պատճեն և այլ համապատասխան փաստաթղթեր
- Ծրագրի հայտատուի և շահառուների անձնագրերի պատճեններ, իրավաբանական անձի դեպքում՝ կազմակերպության գրանցման վկայական և տնօրենի անձյանգրի պատճեն:
- Խիստ գնահատելի կլինեն ագրոբիզնեսի կողմից կիրառվող կանաչ/օրգանական գործելակերպի ընթացիկ վիճակն արտացոլող լուսանկարները:

Փաստաթղթերը կարող են պատրաստվել և ներկայացվել հայերեն կամ անգլերեն լեզուներով մինչև հայտամրցույթի հայտարարված վերջնաժամկետը: **Դիմումի փաթեթը կպահանջվի ներկայացնել փակ ծրարով՝ պատվիրված նամակով, մասնավոր սուրհանդակային ծառայության միջոցով կամ առձեռն (ստորագրված և թվագրված ստացման վկայականը կտրվի առաքողին) հետևյալ հասցեով՝**

ԵՄ Կանաչ գյուղատնտեսության նախաձեռնություն Հայաստանում (ԵՄ-ԿԳՆՀ)
Ավստրիայի Հանրապետության դեսպանության տեխնիկական համագործակցության գրասենյակ, Երևան
Սենյակ 610-611, «Էրեբունի Պլազա» բիզնես կենտրոն,
26/1 Վ. Սարգսյան փողոց, Երևան, Հայաստանի Հանրապետություն

Այլ եղանակներով (օրինակ՝ ֆաքսով կամ էլ-փոստով) կամ այլ հասցեով ուղարկված դիմումները չեն ընդունվի:

Դիմումները կընտրվեն ըստ նախապես սահմանված /չափանիշների/ մեթոդաբանության, և կապ կհաստատվի միայն ընտրված դիմորդների հետ:

Հարցերի դեպքում զանգահարել միայն մինչև 2023 թվականի մարտի 17-ը, երկուշաբթի-ուրբաթ, ժամը՝ 09:00-18:00

Ավստրիայի Հանրապետության դեսպանության տեխնիկական համագործակցության գրասենյակ, Երևան
ԵՄ Կանաչ գյուղատնտեսության նախաձեռնություն Հայաստանում
26/1 Վ. Սարգսյան փողոց • 0001 Երևան • Հայաստան
•www.gaiaarmenia.am • gaia@ada.gv.at • facebook.com/GAIAArmenia

ԵՄ Կանաչ գյուղատնտեսության նախաձեռնություն ծրագիր (ԵՄ-ԿԳՆՀ)

Ավստրիայի Հանրապետության դեսպանության տեխնիկական համագործակցության գրասենյակ

Երեւանի գրասենյակ՝

Հասցե՝ ՀՀ, ք. Երեւան 0010, Էրեբունի պլազա բիզնես կենտրոն, Վ. Սարգսյան 26/1 փողոց, 6-րդ հարկ

Հեռ/բջջ: +374 93 144 635

Էլ. փոստ՝ gaia@ada.gv.at

Facebook/Instagram ՝ European Union-GAIA Armenia

Վանաձորի գրասենյակ

Հասցե՝ ՀՀ, ք. Վանաձոր, Տիգրան Մեծի պողոտա, շենք 24 / 48 (մուտքը միայն փողոցի կողմից)

Հեռ/բջջ: ՝ +374 60 65 00 45, +374 93 144 518

Էլ. փոստ՝ gaia@ada.gv.at

Facebook/Instagram՝ European Union-GAIA Armenia

Այս հրապարակումը պատրաստվել է Եվրոպական միության և Ավստրիական զարգացման համագործակցության ֆինանսական աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում ԵՄ Կանաչ գյուղատնտեսության նախաձեռնություն Հայաստանում (ԵՄ-ԿԳՆՀ) ծրագիրը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության և Ավստրիական զարգացման գործակալության տեսակետները:

© 2023 Ավստրիական զարգացման գործակալություն:
Բոլոր իրավունքները պաշտպանված են.
Արտոնագիր՝ Եվրոպական միություն